

# Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

## «ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերություն

31 դեկտեմբերի 2019թ.



# Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

# Անկախ աուդիտորի եզրակացություն

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**

ՀՀ, ք.Երևան 0012

Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964

Ֆ. + 374 10 260 961

**Grant Thornton CJSC**

8/1 Vagharshyan Str.

0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964

F + 374 10 260 961

«Մորի-Դրամ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը.

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մորի-Դրամ» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

## Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

## Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների

պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

### *Աուդիտորի պատրասխանաբովությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք

առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:


Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին՝ ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Արմեն Հովհաննիսյան  
Տնօրեն

Նաիրա Ուլունց  
Աուդիտոր



19 հունիսի 2020թ.



# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

		2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ծանոթ.		
<b>Ակտիվներ</b>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	90,668	34,794
Ոչ նյութական ակտիվներ	5	240,396	256,312
Հետաձգված հարկային ակտիվներ	6	88,071	82,192
		<u>419,135</u>	<u>373,298</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ		3,035	2,985
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	78,983	66,595
Գերավճար շահութահարկի գծով		308	308
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	377,017	469,266
		<u>459,343</u>	<u>539,154</u>
Ընդամենը ակտիվներ		<u>878,478</u>	<u>912,452</u>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
<i>Կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	9	1,033,000	1,033,000
Լրացուցիչ կապիտալ		69,717	65,680
Կուտակված վնաս		(772,347)	(650,931)
		<u>330,370</u>	<u>447,749</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Փոխառություններ	10	345,505	291,715
		<u>345,505</u>	<u>291,715</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	202,603	172,988
		<u>202,603</u>	<u>172,988</u>
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		<u>878,478</u>	<u>912,452</u>

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված 6-ից 43 էջերում ստորագրվել են 2020թ. հունիսի 19-ին Ընկերության գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

Կիմ Ավանեսյան

Գլխավոր տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից 43 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ համատեղ:

Սուսաննա Զարգարյան

Գլխավոր հաշվապահ



# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ.	2018թ.
Կոմունալ վճարումներ	12	137,952	130,749
Արտաքին վճարումներ		5,142	5,167
Վարկի մարումներ և հաշիվների համալրումներ		54,753	33,266
Միջազգային դրամական փոխանցումներ		5,363	3,760
Խաղաղրոյքներից վճարումներ		40,329	15,779
Էլեկտրոնային փողեր		8,144	7,606
Այլ		23,119	16,393
Ընդամենը հասույթ		<u>274,802</u>	<u>212,720</u>
Անձնակազմի գծով ծախսեր		(143,293)	(107,622)
Մաշվածություն և ամորտիզացիա	4, 5	(74,233)	(53,161)
Ծրագրի սպասարկման ծախսեր		(26,818)	(27,374)
Արժեզրկման (ծախս)/հակադարձում	8	1,536	(484)
Այլ գործառնական ծախսեր	13	(114,597)	(90,191)
Ընդամենը գործառնական ծախսեր		<u>(357,405)</u>	<u>(278,832)</u>
Գործառնական գործունեությունից վնաս		<u>(82,603)</u>	<u>(66,112)</u>
Ֆինանսական եկամուտ	14	16,144	6,665
Ֆինանսական ծախսեր	14	(56,799)	(23,815)
Վնաս մինչև հարկումը		<u>(123,258)</u>	<u>(83,262)</u>
Շահութահարկի գծով փոխհատուցում	15	1,842	5,223
Տարվա վնաս		<u>(121,416)</u>	<u>(78,039)</u>
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		<u>(121,416)</u>	<u>(78,039)</u>

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից 43 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ համատեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	813,000	49,534	(570,644)	291,890
ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը (ծանոթ. 3.7.1)	-	-	(2,248)	(2,248)
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	813,000	49,534	(572,892)	289,642
Կապակցված կողմից տրամադրված փոխառության	-	20,183	-	20,183
Հետաձգված հարկ	-	(4,037)	-	(4,037)
Բաժնետիրական կապիտալի համալրում	220,000	-	-	220,000
Սեփականատերերի հետ գործարքներ	1,033,000	65,680	(572,892)	525,788
Տարվա վնաս	-	-	(78,039)	(78,039)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,033,000	65,680	(650,931)	447,749
Հետաձգված հարկի ճշգրտում	-	4,037	-	4,037
Տարվա վնաս	-	-	(121,416)	(121,416)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,033,000	69,717	(772,347)	330,370

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից 43 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ համատեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա վնաս մինչև հարկումը	(123,258)	(83,262)
<i>Ճշգրտումներ՝</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	74,233	53,161
Արժեզրկման ծախս	(1,536)	484
Ֆինանսական եկամուտ	(6,412)	(6,665)
Ֆինանսական ծախսեր	56,799	14,986
Փոխարժեքային տարբերությունից զուտ (օգուտ)/վնաս	(9,732)	8,829
<i>Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները</i>	<u>(9,906)</u>	<u>(12,467)</u>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(12,338)	(26,393)
Պաշարների փոփոխություն	(50)	(1,099)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	29,645	48,666
Ժամկետային ավանդներում փոփոխություն	-	61,200
<i>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>7,351</u>	<u>69,907</u>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(69,780)	(31,155)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(44,411)	(65,127)
Ստացված տոկոսային եկամուտ	6,412	6,665
<i>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	<u>(107,779)</u>	<u>(89,617)</u>
<i>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր	-	220,000
<i>Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>-</u>	<u>220,000</u>
<i>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/ած</i>	<u>(100,428)</u>	<u>200,290</u>
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	469,266	281,108
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	6,643	(8,838)
Ակնկալվող պարտքային կուրուստների ազդեցությունը	1,536	(3,294)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում (Ծանոթ. 8)	<u>377,017</u>	<u>469,266</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից 43 էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ համատեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերություն) հիմնադրվել է 2011թ.-ին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 2011թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) թիվ 15 գրանցման վկայականով:

Ընկերության միակ բաժնետերը «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն է:

Ընկերության հիմնական գործունեությունն է վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը: Ծառայությունների հիմնական տեսակը հանդիսանում է «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ սպասարկման կենտրոններում գտնվող մասնաճյուղերի միջոցով կոմունալ վճարումների, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, ֆիքսված և բջջային հեռախոսակապի, ինտերնետի ծառայությունների դիմաց վճարումների ընդունումը, փոխանցումների իրականացումը և այլն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Արգիշտի փ. 4/1: Ընկերությունն ունի 18 մասնաճյուղեր Երևանում և 12 մասնաճյուղեր ՀՀ մարզերում:

## 2 Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2019թ. Ընկերությունը սկսել է կիրառել վարձակալության ճանաչման նոր ուղեցույցը (տե՛ս ծանոթագրություն 3.5):

### 2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով կամ իրական արժեքով:

### 2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրանով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

## 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 17-ում:

## 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2019թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

### **Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2019թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար**

ՖՀՄՍ 9 (Փոփոխություններ) «Ֆինանսական գործիքներ. կանխավճարների առանձնահատկությունները՝ բացասական փոխհատուցմամբ»

ՖՀՄՍ 9-ի համաձայն պարտքային գործիքը կարող է չափվել ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, պայմանով, որ պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են «միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ» (SPPI չափանիշ) և գործիքը պահվում է այդ դասակարգմանը համապատասխանող բիզնես մոդելի շրջանակներում: ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ֆինանսական ակտիվը բավարարում է SPPI չափանիշին՝ անկախ որևէ իրադարձությունից կամ հանգամանքից, որը պատճառ է հանդիսանում պայմանագրի վաղաժամ դադարեցման համար և անկախ նրանից, թե պայմանագրի վաղաժամ դադարեցման պատճառով որ կողմն է վճարում կամ ստանում համապատասխան փոխհատուցում:

Այս փոփոխությունների ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

### **ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ»**

ՖՀՄՍ 16-ը «Վարձակալություններ» փոխարինում է ՀՀՄՍ 17-ը «Վարձակալություն», առկա երեք մեկնաբանությունների հետ մեկտեղ (ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ 15 «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»):

Այս նոր ստանդարտի կիրառման նպատակով Ընկերությունը իր բոլոր նախկին գործառնական վարձակալությունները որոշակիացրել է որպես փոքրարժեք ակտիվի վարձակալություն կամ ստանդարտի սկզբնական կիրառման պահին 12 ամսից կարճ վարձակալական ժամկետ ունեցող վարձակալություն, քանի որ Ընկերության բոլոր վարձակալական պայմանագրերի պայմանների համաձայն վարձակալը և վարձատուն յուրաքանչյուրն իր հերթին ունի վարձակալությունը վաղաժամկետ դադարեցնելու իրավունք առանց որևէ տուգանքի և վնասի փոխհատուցման պարտավորվածության, առանց մեկ այլ կողմի թույլտվության (դադարեցումից

առաջ մեկից երեք ամսիների ընթացքում տեղեկացման պայմանով): Ընկերությունը գնահատել է նաև, որ վարձակալական պայմանագրերի հնարավոր դադարեցմանը վերաբերող ծախսումները, ինչպիսիք են տեղափոխման, Ընկերության կարիքներին համապատասխան հիմքում ընկած մեկ այլ ակտիվի որոշակիացման (որոնման), Ընկերության գործունեությունում նոր ակտիվի ինտեգրման հետ կապված ծախսումները աննշան են: Հետևաբար, անցման ժամանակ Ընկերությունը կիրառել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

Ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար Ընկերությունը ընտրել է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալության սահմանման օգտագործումը և չի կիրառել ՖՀՄՍ 16-ը նախկինում ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալություն չճանաչված համաձայնությունների նկատմամբ:

### **ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 23 «Շահութահարկով հարկման մոտեցումների վերաբերյալ անորոշություն»**

ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 23-ը տրամադրում է ուղեցույց այն բանի վերաբերյալ, թե ինչպես արտացոլել ՀՀՄՍ 12-ի համաձայն հարկերի հաշվառման մեջ անորոշությունների ազդեցությունը, մասնավորապես. (ա) արդյոք անորոշ հարկային մոտեցումները պետք է դիտարկվեն առանձին, (բ) ենթադրություններ հարկային մարմինների ստուգումների վերաբերյալ, (գ) հարկվող շահույթի (հարկային վնասի), հարկման բազաների, չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային կրեդիտների, ինչպես նաև հարկի դրույքաչափերի որոշում, և (դ) փաստերի և հանգամանքների փոփոխությունների ազդեցությունը:

Ընկերությունն ընտրել է ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 23-ի հետընթաց կիրառման մոտեցումը՝ կուտակային ազդեցությունը հաշվառելով կուտակված արդյունքում սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ՝ 2019թ. հունվարի 1: Շահութահարկի գծով պարտավորության աճի ազդեցությունը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չի եղել:

### **Տարեկան բարեփոխումներ՝ 2015-2017թթ.**

2015-2017թթ. տարեկան բարեփոխումները մի շարք ՖՀՄՍ-ներում կատարել են որոշ աննշան փոփոխություններ: Ընկերությանը վերաբերող փոփոխություններն ամփոփված են ստորև.

#### **ՀՀՄՍ 12 «Շահութահարկ. որպես սեփական կապիտալի տարր դասակարգված գործիքների վճարման հետ կապված հարկային հետևանքները»**

ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները պարզաբանում են, որ դիվիդենդների հետ կապված հարկային հետևանքները ճանաչվում են շահույթում կամ վնասում, համապարփակ արդյունքում կամ սեփական կապիտալում՝ ելնելով նրանից, թե ընկերությունը որտեղ է սկզբնապես ճանաչել այդ գործարքները կամ իրադարձությունները:

#### **ՀՀՄՍ 23 «Փոխառության ծախսումներ. կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներ»**

ՀՀՄՍ 23-ի 14-րդ հոդվածը հստակեցնում է, թե ինչպես որոշել փոխառության ծախսերի այն գումարը, որը ենթակա է կապիտալացման, երբ ընկերությունը ստանում է ընդհանուր նպատակների համար փոխառու միջոցներ և օգտագործում է դրանք որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար:

ՀՀՄՍ 23-ը պահանջում է, որ ընդհանուր նպատակների համար ստացված փոխառու միջոցները որոշելիս ընկերությունը բացառի «փոխառությունները, որոնք սպացվել են հատուկ որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար»: ՀՀՄՍ-ն դիտարկել է, որ ընկերությունները կարող են սխալ մեկնաբանել այս բառերը՝ ենթադրելով, որ ընդհանուր նպատակով ստացված

փոխառու միջոցներից անհրաժեշտ է բացառել այն փոխառու միջոցները՝ մնացորդները, որոնք սկզբնապես ստացվել էին հատուկ որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար, որն այժմ պատրաստ է նպատակային օգտագործման կամ վաճառքի համար:

Այսպիսով, փոփոխությունները պարզաբանում են, որ երբ որակավորվող ակտիվը պատրաստ է իր նպատակային օգտագործման կամ վաճառքի համար, ընկերությունը պետք է դիտարկի սկզբնապես հատուկ որակավորվող ակտիվ ձեռք բերելու համար ստացված փոխառության մնացորդը որպես ընդհանուր նպատակով ստացված փոխառություն:

Փոփոխությունները ենթակա են կիրառման առաջընթաց (այսինքն՝ միայն այն փոխառության ծախսումների համար, որոնք առաջացել են այս փոփոխություններն առաջին անգամ կիրառելու հաշվետու ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո) քանի որ փոխառության ծախսումները հետընթաց կապիտալացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման հետ կապված ծախսերը կարող են էապես գերազանցել ակնկալվող օգուտները:

**Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից**

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (<<ՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընթացիկ տարում չկիրառված նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները չեն բացահայտվել, քանի որ չի ակնկալվում, որ դրանք էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

### 3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

#### 3.1 Արտարժույթ

##### Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (<< ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ << ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը.

	2019թ. դեկտեմբերի 31	2018թ. դեկտեմբերի 31
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	479.70	483.75
<< դրամ/1 Եվրո	537.26	553.65
<< դրամ/1 ՌՌԻԲ	7.77	6.97

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային

հողվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հողվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հողվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հողվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հողվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

### 3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	5 տարի
Համակարգչային տեխնիկա (բացառությամբ սերվերների և ցանցային սարքավորումների)	3 տարի
Սերվերներ և ցանցային սարքավորումներ	5 տարի
Այլ	5 տարի

### 3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ընկերության ոչ նյութական ակտիվները, հիմնականում, բաղկացած են համակարգչային ծրագրերից:

Անորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 2-10 տարի (համակարգչային ծրագրեր և այլ ոչ նյութական ակտիվներ):

### 3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն անորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

### 3.5 Վարձակալված ակտիվներ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2.5-ում, Ընկերությունը ՖՀՄՍ 16-անցում կատարելիս իր բոլոր նախկին գործառնական վարձակալությունները որոշակիացրել է որպես փոքրարժեք ակտիվի վարձակալություն կամ ստանդարտի սկզբնական կիրառման պահին 12 ամսից կարճ վարձակալական ժամկետ ունեցող վարձակալություն՝ անցման ժամանակ կիրառելով օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

#### **2019թ. հունվարի 1-ից սկսած կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

##### *Ընկերությունը որպես վարձակալ*

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանն,
- Ընկերությունը իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունը իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունը իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

### *Վարձակալության ճանաչում և չափում*

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն

ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ընկերությունը վարձակալության ժամկետը որոշում է որպես վարձակալության չեղյալ չհամարվող ժամանակաշրջան՝ հաշվի առնելով այն ժամանակաշրջանները, որոնց համար առկա է վարձակալության ժամկետի երկարաձգման կամ դադարեցնելու հնատարրություն, Վարձակալության ժամկետի գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը տես ծանոթագրություն 2.5-ում:

Ընկերությունը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները կընդգրկվեն են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

### ***Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն***

#### *Գործառնական վարձակալություն - Ընկերությունը որպես վարձակալ*

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

### **3.6 Պաշարներ**

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

### **3.7 Ֆինանսական գործիքներ**

#### *Ճանաչում և ապաճանաչում*

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

#### *Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը*

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական

պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Ընկերությունը չունի որպես իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- Ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 18.2-ում:

### *Ֆինանսական ակտիվների հետագա չափումը*

#### *Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղջման ազդեցությունը աննշան է, գեղջում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը, որոնք նախկինում՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն դասակարգված էին որպես մինչև մարման ժամպետը պահվող:

### *Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: Այս մոդելը փոխարինում է ՀՀՄՍ 39-ում կիրառվող «կրած վնասների մոդելին»: Նոր պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և այլ փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային

ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը (թողարկողի համար), որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն խեղաթյուրվել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն խեղաթյուրվել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

«12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են առաջին դասի ակտիվների համար, մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

### *Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ*

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորուստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Ընկերությունն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Ընկերությունը գնահատում է դրամական միջոցների և դրանց համարժեքների արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է ծանոթագրություն 8-ում:

### *Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը*

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 18.2-ում:

### *Վարկեր և փոխառություններ*

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից

հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

*Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

**3.7.1 Անցման բացահայտում**

ՖՀՄՍ 9-ը կիրառելիս Ընկերությունն օգտվել է անցումային ազատման հնարավորությունից և ընտրել է նախորդ ժամանակաշրջանները չվերաներկայացնելու մոտեցումը: Դասակարգման, չափման և արժեզրկման ժամանակ ՖՀՄՍ 9-ի կիրառումից առաջացած տարբերությունները ճանաչվել են կուտակված արդյունքում:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն է ունեցել հետևյալ բնագավառների վրա.

- Ֆինանսական ակտիվների արժեզրկում՝ կիրառելով ակնկալվող պարտքային կորուստների մոդելը: Սա ազդեցություն է ունենում Ընկերության դրամական միջոցների և դրանց համարժեքների և ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտքային տիպի ակտիվների վրա:

Սկզբնական կիրառման ամսաթվին՝ 2018թ. հունվարի 1-ին Ընկերության ֆինանսական գործիքները վերադասակարգվել են հետևյալ կերպ.

Հազար դրամ	Չափման դասակարգում		Հաշվեկշռային արժեք		
	Սկզբնական դասակարգումը՝ ըստ ՀՀՄՍ 39-ի	Դասակարգումը՝ ըստ ՖՀՄՍ 9-ի	Վերջնական մնացորդը ըստ ՀՀՄՍ 39-ի 31.12.2017թ.	ՖՀՄՍ 9-ի կիրառում	Սկզբնական մնացորդը ըստ ՖՀՄՍ 9-ի 01.01.2018թ.
Ընթացիկ ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	ամորտիզացված արժեքով	ամորտիզացված արժեքով	281,108	(2,810)	278,298
Ընդամենը ֆինանսական ակտիվներ			<u>281,108</u>	<u>(2,810)</u>	<u>278,298</u>

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում ֆինանսական պարտավորությունների չափման և դասակարգման փոփոխություններ չեն եղել:

ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցությունը պահուստների և չբաշխված շահույթի վրա ներկայացված է ստորև.

<b>Հազար ՀՀ դրամ</b>	<b><u>Չբաշխված շահույթ</u></b>
<i>Չբաշխված շահույթ</i>	
Տարեվերջի մնացորդ ՀՀՄՍ 39-ի համաձայն (2017թ. դեկտեմբերի 31)	(570,644)
ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում՝	(2,810)
Հետաձգված հարկ	562
Տարեկվարի մնացորդ ՖՀՄՍ 9-ի համաձայն (2018թ. հունվարի 1)	<u>(572,892)</u>
Ընդամենը սեփական կապիտալի փոփոխություններ ՖՀՄՍ 9-ի ներդրման հետևանքով	<u>(2,248)</u>

### 3.8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին և սեփական տերմինալներում:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

### 3.9 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Կուտակված վնասը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված վնասը:

Լրացուցիչ կապիտալը Ընկերության բաժնետիրոջից ներգրավված փոխառության իրական և անվանական արժեքների տարբերությունն է, որը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

### 3.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղջման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը,

որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

### 3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

### 3.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

### *Վճարովի բացակայություններ*

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

### *Պարգևավճարներ*

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

## 3.13 Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

### *Ծառայությունների մատուցում*

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Ընկերության հասույթը, հիմնականում, գոյանում է վճարահաշվարկային ծառայություններից:

Ընկերության կողմից մատուցվող վճարահաշվարկային ծառայությունների հաշվառումն իրականացվում է Ընկերության պրոցեսինգային, տեխնիկական և այլ բաժինների կողմից ներկայացրած հաշվետվությունների և այլ գրավոր ներկայացումների հիման վրա: Վերոհիշյալ հաշվետվությունների և այլ գրավոր ներկայացումները, ըստ ներկայացման ժամկետների, լինում են օրական և ամսական:

### *Վճարահաշվարկային ծառայություններ*

Հասույթն առաջանում է վճարահաշվարկային ծառայությունների դիմաց վճարվելիք կոմիսիոն վճարներից:

Վճարահաշվարկային ծառայությունները մասնավորապես ներառում են՝

- հայկական դրամով կամ արտարժույթով վճարողներից որպես ձեռնարկատիրական գործունեություն վճարումների ընդունումը շահառուին ցանկացած եղանակով

անմիջականորեն կամ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող այլ անձի միջոցով վճարելու նպատակով կամ հայկական դրամով կամ արտարժույթով շահառուներին որպես ձեռնարկատիրական գործունեություն վճարումների կատարումն այդ անձանց օգտին ցանկացած եղանակով ստացված միջոցների հաշվին,

- էլեկտրոնային փողերի թողարկումը, սպասարկումը և իրացումը
- երրորդ անձանց համար դրամարկղային գործառնությունների իրականացումը,
- պրոցեսինգի և քլիրինգի իրականացումը

### Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

## 4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգչային տեխնիկա (ներառյալ սերվերներ)			
	Մեքենաներ և սարքավորումներ		Այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	10,372	64,912	6,649	81,933
Ավելացում	29,218	1,529	408	31,155
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,590	66,441	7,057	113,088
Ավելացում	52,849	2,353	14,578	69,780
Դուրսգրում	(99)	-	-	(99)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	92,340	68,794	21,635	182,769
<i>Կուտակված մաշվածություն</i>				
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	6,373	60,017	4,929	71,319
Տարվա հաշվարկ	2,943	2,920	1,112	6,975
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,316	62,937	6,041	78,294
Տարվա հաշվարկ	10,010	2,558	1,338	13,906
Դուրսգրում	(99)	-	-	(99)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,227	65,495	7,379	92,101
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,274	3,504	1,016	34,794
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	73,113	3,299	14,256	90,668

### Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 78,973 հազար դրամ (2018թ.՝ 56,690 հազար դրամ):

## Հիմնական միջոցների սահմանափակումներ

2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2018թ.՝ նույնպես):

## 5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ն ծրագրեր	Այլ	Կապիտալ ներդրումներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>				
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	350,911	2,450	-	353,361
Ավելացում	65,127	-	-	65,127
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	416,038	2,450	-	418,488
Ավելացում	42,750	-	1,661	44,411
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	458,788	2,450	1,661	462,899
<i>Կուրսաված ամորտիզացիա</i>				
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	115,125	865	-	115,990
Տարվա հաշվարկ	45,941	245	-	46,186
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	161,066	1,110	-	162,176
Տարվա հաշվարկ	60,082	245	-	60,327
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	221,148	1,355	-	222,503
<i>Հաշվեկշռային արժեք</i>				
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	254,972	1,340	-	256,312
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	237,640	1,095	1,661	240,396

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների (2018թ.՝ նույնպես):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 2,375 հազար դրամ (2018թ.՝ 2,023 հազար դրամ):

2019թ. Ընկերությունը կատարել է վերականգնման աշխատանքներ M-Payment համակարգում (2018թ.՝ վերականգնման աշխատանքներ M-Payment համակարգում, ներառյալ IOS-ի եւ Android-ի հավելվածների համար, M-Payment վճարային համակարգի ինտեգրում MPLAT համակարգին, 4D ծառայության ավելացում, Cash-to-Card ֆունկցիոնալի տրամադրում, որոշ գործընկերների օնլայն ծառայության ակտիվացում):

## 6 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	82,192	80,444
ՖՀՄՍ 9-ի համաձայն ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում	-	562
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	4,037	(4,037)
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 15)	1,842	5,223
Տարեվերջի մնացորդ	<u>88,071</u>	<u>82,192</u>

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2018			2019		
	Զուտ մնացորդ	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային պարտավորություն	Հետաձգված հարկային ակտիվ
Դրամական միջոցներ	659	-	(343)	316	-	316
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	1,616	-	136	1,752	-	1,752
Փոխանցվող հարկային վնաս	83,954	-	6,394	90,348	-	90,348
Երկարաժամկետ փոխառություններ	(4,037)	4,037	(4,345)	(4,345)	(4,345)	-
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	<u>82,192</u>	<u>4,037</u>	<u>1,842</u>	<u>88,071</u>	<u>(4,345)</u>	<u>92,416</u>

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2017				2018		
	Զուտ մնացորդ	ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Շահույթում կամ վնասում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային պարտավորություն	Հետաձգված հարկային ակտիվ
Դրամական միջոցներ	4,000	562	-	(3,903)	659	-	659
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	1,855	-	-	(239)	1,616	-	1,616
Փոխանցվող հարկային վնաս	85,023	-	-	(1,069)	83,954	-	83,954
Հիմնական միջոցներ	(781)	-	-	781	-	-	-
Ոչ նյութական ակտիվներ	(735)	-	-	735	-	-	-
Երկարաժամկետ փոխառություններ	(8,918)	-	(4,037)	8,918	(4,037)	(4,037)	-
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	80,444	562	(4,037)	5,223	82,192	(4,037)	86,229

Ընկերության ղեկավարության գնահատմամբ հարկային վնասը Ընկերությունը կարող է օգտագործել օրենսդրությունում սահմանված ժամկետներում ամբողջությամբ 2020-ից 2023թ. ընկած ժամանակաշրջանում:

## 7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Էլեկտրոնային փողերի գծով ստացվելիք գումարներ	38,592	32,940
Վճարահաշվարկայինի գծով դեբիտորական պարտքեր	36,863	32,854
Այլ դեբիտորական պարտքեր	3,528	801
	78,983	66,595

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Տե՛ս ծանոթագրություն 19՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

## 8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Դրամական միջոցներ առևտրային բանկերում	106,620	308,680
Կարճաժամկետ ավանդներ բանկերում	31,283	-
Դրամական միջոցներ դրամարկում	70,677	64,740
Դրամական միջոցներ ճանապարհին	56,448	52,675
Դրամական միջոցներ տերմինալներում	113,747	66,465
	378,775	492,560
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	(1,758)	(23,294)
	<u>377,017</u>	<u>469,266</u>

Դրամական միջոցներ և դրանց համարժեքների գծով արժեզրկման կորուստների հատկացումների շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
31 դեկտեմբեր 2017թ.	20,000
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	2,810
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	22,810
Տարվա ծախս	484
31 դեկտեմբեր 2018թ.	23,294
Տարվա հակադարձում	(1,536)
Դուրսգրում	(20,000)
31 դեկտեմբեր 2019թ.	<u>1,758</u>

19 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները: Վերը ներկայացված արժեզրկման պահուստի համեմատական գումարը հաշվարկված է ՖՀՄՍ 9-ի ակնկալվող կորուստների մոդելի հիման վրա:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 77,615 հազար դրամ գումարով (73%) հաշիվները կենտրոնացված են երեք բանկում (2018թ. 217,717 հազար դրամ (71%) մեկ բանկում):

Ավանդները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավանդը ներդրված է ՀՀ դրամով մեկ բանկում, մինչև 28 հունվարի 2020թ. մարման ժամկետով:

2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրված ավանդի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը ՀՀ դրամով կազմում է 8.9%:

Դրամական միջոցները ճանապարհին իրենցից ներկայացնում են Ընկերության աշխատակից ինկասսատորների, այլ ինկասսացիոն կազմակերպությունների և գործակալների կողմից տերմինալներից և Ընկերության մասնաճյուղերից ինկասսացված և բանկային հաշիվներին մուտքագրված, սակայն բանկերի կողմից դեռևս չհաշվառված գումարները:

Տե՛ս ծանոթագրություն 19՝ դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների արժույթների բացահայտման համար:

## 9 Կապիտալ և պահուստներ

### 9.1 Բաժնետիրական կապիտալ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 1,033,000 հազ. դրամ:

2018թ. ընթացքում Ընկերությունն ավելացրել է բաժնետիրական կապիտալը 220,000 հազ. դրամ գումարով:

Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,033,000 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ անվանական արժեքով:

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31 դրությամբ Ընկերության 100% բաժնետեր հանդիսանում է «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել (2018թ-ին՝ նույնպես):

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում:

### 9.2 Լրացուցիչ կապիտալ

Ընկերության բաժնետիրոջից ստացված շուկայականից ցածր տոկոսով փոխառությունների իրական և պայմանագրային արժեքների միջև տարբերությունը՝ 65,680 հազ. դրամը, ճանաչվել է սեփական կապիտալում, որպես լրացուցիչ կապիտալ (տես՝ ծանոթագրություն 10):

## 10 Փոխառություններ

Հազար դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Կապակցված կողմից ստացված չապահովված փոխառություններ	345,505	291,715
	<u>345,505</u>	<u>291,715</u>

Փոխառությունը ներգրավված է Ընկերության մայր կազմակերպությունից շուկայականից ցածր տոկոսադրույքով: Փոխառության իրական արժեքը սահմանվել է զեղչելով ապագա դրամային հոսքերը համապատասխան շուկայական տոկոսադրույքով: Ձեռքը ճանաչվել է կապիտալում, որպես լրացուցիչ կապիտալ: 2019թ. իրական արժեքը հաշվարկվել է՝ զեղչելով դրամական միջոցների հոսքերը 6% տոկոսադրույքով (2018թ.՝ 6%):

Փոխառության մայր գումարը և տոկոսները պետք է վճարվեն 2023թ. ընթացքում: Տես ծանոթագրություն 19, փոխառության արժույթի բացահայտման համար:

## 11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	17,353	16,114
Վճարահաշվարկային գործառնությունների գծով	137,079	117,683
Հաճախորդների նկատմամբ էլեկտրոնային փողերի գծով	31,281	29,017
Պարտավորություններ անձնակազմի նկատմամբ	9,734	7,441
Ստացված կանխավճարներ	3,237	-
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	2,905	2,235
Այլ պարտավորություններ	1,014	498
	<u>202,603</u>	<u>172,988</u>

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

Ընկերության արտարժույթային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 19-ում:

## 12 Կոմունալ վճարումներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Հեռախոս և ինտերնետ	96,842	94,444
Գազ	17,824	14,676
Էլեկտրականություն	18,996	18,066
Զրի մատակարարում	3,852	3,563
Այլ	438	-
	<u>137,952</u>	<u>130,749</u>

## 13 Այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տերմինալների սպասարկում	24,252	10,387
Փոխանցումներ վճարային քարտերին	5,976	3,198
Դրամական միջոցների հավաքագրում	17,193	14,203
Գործառնական վարձակալություն	21,898	17,117
Ծառայությունների մատուցում	1,936	1,928
Փոստի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	3,288	2,997
Գրասենյակային ծախսեր	6,858	5,439
Բանկային ծառայությունների գծով ծախսեր	13,521	11,253
Մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր	3,600	3,600
Մարքեթինգի և գովազդային ծախսեր	4,700	12,432
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	501	500
Ֆինանսական հաշտարարի գծով ծախսեր	113	140
Գործուղման ծախսեր	1,658	558
Այլ	9,103	6,439
	<u>114,597</u>	<u>90,191</u>

## 14 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Կապակցված կողմից ստացված փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	(56,799)	(14,986)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից զուտ վնաս	-	(8,829)
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	<u>(56,799)</u>	<u>(23,815)</u>
Բանկային ավանդներից և բանկային հաշիվներից	6,412	6,665
Արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից զուտ օգուտ	9,732	-
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	<u>16,144</u>	<u>6,665</u>
Զուտ ֆինանսական ծախսեր	<u>(40,655)</u>	<u>(17,150)</u>

## 15 Շահութահարկի գծով փոխհատուցում

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ (տե՛ս ծանոթագրություն 6)	(1,842)	(5,223)
	<u>(1,842)</u>	<u>(5,223)</u>

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2018թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական

հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև:

*Հարկային դրույքաչափերի փոփոխություններ և հետագա հարկային ծախսերի վրա ազդող գործոններ*

2019թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում 2020թ. հունվարի 1-ից ակնկալվում է շահութահարկի դրույքաչափի նվազեցում 20%-ից 18%-ի: Համապատասխանաբար, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկի մնացորդները ճանաչվել են՝ կիրառելով 18% դրույքը (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 20%):

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով փոխհատուցման և հաշվապահական վնասի միջև փոխկապակցվածությունը.

Հազար դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ		Արդյունավետ հարկային դրույքաչափ	
	2019թ.	(%)	2018թ.	(%)
Վնաս մինչև հարկումը	(123,258)		(83,262)	
Տեսական շահութահարկ՝ 20% դրույքաչափով	(24,652)	(20)	(16,652)	(20)
Արտարժույթի (դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	1,946	2	(1,766)	(2)
Չփոխանցվող հարկային վնասի հետաձգված հարկային ակտիվի նվազեցում	22,213	18	13,035	16
Հարկային դրույքաչափի փոփոխություն	(1,644)	-		
Չնվազեցվող ծախսեր	295	-	160	-
<b>Շահութահարկի գծով փոխհատուցում</b>	<b>(1,842)</b>	<b>(1)</b>	<b>(5,223)</b>	<b>(6)</b>

## 16 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համաճարակ: Կորոնավիրուսի բռնկման վերջնական ազդեցությունն այս պահին անհայտ է, այն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա: COVID-19-ի հետ կապված զարգացող իրավիճակը կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ընկերության գործառնությունների ծավալի վրա: Այն կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկական անձ, այնպես էլ իրավաբանական անձ վարկառուների կողմից վարկային հարաբերությունների արդյունքում ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու անկարողությամբ և այլ հանգամանքներով:

2020թ. Մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարել է երկրում արտակարգ իրավիճակ, որը կտևի մինչև 2020թ. հուլիսի 14-ը: Սույն ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ազդեցությունը:

## 17 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

### 17.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

#### *Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք գոյություն ունեն ակտիվների արժեզրկման ցուցանիշներ: Եթե կան նման ցուցանիշներ, Ընկերությունը հաշվարկում է այդ ակտիվների փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկման որոշման ժամանակ ղեկավարությունը կատարել է որոշ գնահատումներ, որոնք ներառում են, մասնավորապես, արժեզրկման պատճառը, ժամանակը և գումարը: Արժեզրկումը կախված է մի շարք գործոններից, մասնավորապես, տեխնոլոգիական փոփոխություններից (որոնք կարող են ազդել ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքների վրա), ծառայության մատուցման դադարեցումից (որը կարող է հանգեցնել լիցենզիայի դադարեցմանը և հետևաբար համապատասխան ոչ նյութական ակտիվի արժեզրկմանը):

#### *Իրական արժեքի չափումը*

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 20):

#### *Կապակցված կողմերի հետ գործառնություններ*

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա: Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 10-ում, Մայր ընկերությունը փոխառություն է տրամադրել Ընկերությանը շուկայայանից ցածր տոկոսադրույքով: Ղեկավարության գնահատմամբ տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքները չեն համապատասխանում դրանց

իրական արժեքներին, և հետևաբար դրանք գեղջվել են փոխառության տրամադրման պահին գործող շուկայական տոկոսադրույքներով՝ հաշվի առնելով նման արժույթներով ու պայմաններով փոխառություններ ստանալու համար համապատասխան ֆինանսական շուկայում գործող տոկոսադրույքները:

## 18 Ֆինանսական գործիքներ

### 18.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

### 18.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

#### Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	75,455	65,794
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	377,017	469,266
	<u>452,472</u>	<u>535,060</u>

#### Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ</i>		
Փոխառություններ	345,505	291,715
Առևտրային կրեդիտորական պարտքեր	195,447	170,255
	<u>540,952</u>	<u>461,970</u>

## 19 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքովաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

## Ֆինանսական ռիսկի գործոններ

### ա) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները:

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

### Արտարժույթային ռիսկ

Ընկերությունն իրականացնում է գործարքներ արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկվում են արտարժույթային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացույցված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

Արտարժույթային ռիսկն ունի հետևյալ ազդեցությունը Ընկերության ֆինանսական ակտիվների վրա՝

### Հոդված

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
<i>Ֆինանսական ակտիվներ</i>			
Վճարահաշվարկայինի գծով դեբիտորական պարտքեր	1,261	1,472	2,488
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	23,729	18,358	30,002
	24,990	19,830	32,490
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>			
Փոխառություններ	345,505	-	-
	345,505	-	-
<b>Զուտ դիրք 2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>(320,515)</b>	<b>19,830</b>	<b>32,490</b>
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	37,803	37,688	16,347
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	291,715	-	-
<b>Զուտ դիրք 2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>(253,912)</b>	<b>37,688</b>	<b>16,347</b>

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուսական ռուբլիի նկատմամբ դրամի 10% (2018թ.՝ 10%) աճին կամ նվազմանը: 10%-ը (2018թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2018թ.՝ 10%):

Դրամի արժեվորումը ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուսական ռուբլիի նկատմամբ 10%-ով (2018թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ռուսական ռուբլիի ազդեցություն	
	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.
Շահույթ կամ վնաս	(32,052)	(25,391)	1,983	3,769	3,249	1,635
Սեփական կապիտալ	(32,052)	(25,391)	1,983	3,769	3,249	1,635

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժույթային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

### *Տոկոսադրույքային ռիսկ*

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

#### *բ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքը: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ և/կամ հաշվետվություններ: Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար կրեդիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում:

### *Առևտրային դեբիտորական պարտքեր*

Ընկերությունը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ:

Անկախվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2019թ. դեկտեմբերի 31-ին և 2019թ. հունվարի 1-ին համապատասխանաբար նախորդող ժամանակահատվածում ձևավորված պատմական պարտքային կորուստների վրա: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի:

*գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Ընկերությունը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան, այն է՝ էլեկտրոնային փող թողարկող վճարահաշվարկային կազմակերպությունների բարձր իրացվելի ակտիվների և պարտավորությունների միջև հարաբերակցությունը պետք է կազմի 100 տոկոս:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահպանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության նորմատիվը: Ընկերությունը չի ունեցել իրացվելիության նորմատիվի խախտումներ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %
Բարձր իրացվելի ակտիվներ/պարտավորություններ	187	273

*Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների*

Ստորև ներկայացվում է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես:

Հազար ՀՀ դրամ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	<u>Մինչև 1 ամիս</u>	<u>1 - 12 ամիս</u>	<u>1-5 տարի</u>	<u>5 տարուց ավելի</u>	<u>Ընդամենը</u>
Ֆինանսական պարտավորություններ					
Փոխառություններ	-	-	422,136	-	422,136
Առևտրային կրեդիտորական պարտքեր	195,447	-	-	-	195,447
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	<u>195,447</u>	<u>-</u>	<u>422,136</u>	<u>-</u>	<u>617,583</u>

Հազար ՀՀ դրամ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	<u>Մինչև 1 ամիս</u>	<u>1 - 12 ամիս</u>	<u>1-5 տարի</u>	<u>5 տարուց ավելի</u>	<u>Ընդամենը</u>
Ֆինանսական պարտավորություններ					
Փոխառություններ	-	-	422,136	-	422,136
Առևտրային կրեդիտորական պարտքեր	170,255	-	-	-	170,255
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	<u>170,255</u>	<u>-</u>	<u>422,136</u>	<u>-</u>	<u>592,391</u>

## 20 Իրական արժեքի չափում

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	<u>Մակարդակ 1</u>	<u>Մակարդակ 2</u>	<u>Մակարդակ 3</u>	<u>Ընդամենը իրական արժեք</u>	<u>Ընդամենը հաշվեկշռային արժեք</u>
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	75,455	-	75,455	75,455
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	377,017	-	377,017	377,017
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Փոխառություններ	-	345,505	-	345,505	345,505
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	195,447	-	195,447	195,447

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	469,266	-	469,266	469,266
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	65,794	-	65,794	65,794
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Փոխառություններ	-	291,715	-	291,715	291,715
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	170,255	-	170,255	170,255

*Առևտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր*

Առևտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք և ստացվելիք գումարների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

*Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Դրամական միջոցների և դրանց համարժեքների հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

**21 Պայմանական պարտավորություններ**

*Իրավական և հարկային պարտավորություններ*

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են սուուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան սուուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի

հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջների, եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազեցումը:

Ընկերությունը անընդհատության սկզբունքով գործունեությունը շարունակելու համար կիրականացնի դրան ուղղված միջոցառումների ծրագիր և 2020թ. ընթացքում կապահովի օրենսդրական պահանջների համապատասխանությունը:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության նկատմամբ չի եղել որևէ դատական հայց: Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

## 22 Պարտավորվածություններ

### 22.1 Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ

#### *Ընկերությունը որպես վարձակալ*

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով գործառնական վարձակալությամբ ստացել է տարածքներ տաս տարով: Ընկերությունը վարձակալության ժամանակաշրջանի վերջում հնարավորություն չունի ձեռք բերել վարձակալված տարածքները:

Գործառնական վարձակալության գծով վճարվելիք վարձավճարները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	2,006	2,006
1 - 5 տարի	3,450	7,954
5 տարի և ավել	1,250	-
	<u>6,706</u>	<u>9,960</u>

## 23 Պայմանականություններ

### 23.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն: Շարունակելով 2018թ. գրանցված աճի համոզիչ տեմպը՝ 2019թ. տարեկան տնտեսական աճը մնացել է կայուն: Տնտեսության մեջ առանցքային դեր են ունեցել առևտուրի, ծառայությունների և արդյունաբերության ոլորտները:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

## 23.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

## 24 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար դրամ	2019	2018
	Փոխառություններ	Փոխառություններ
Հունվարի 1-ի դրությամբ	291,715	297,113
Դրամային հոսքերից	-	-
Ստացված գումար	-	-
Ոչ դրամային հոսքերից	53,790	(5,398)
Հաշվեգրված տոկոսներ	56,799	14,986
Լրացուցիչ կապիտալի մաս	(3,009)	(20,183)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	-	(201)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	345,505	291,715

## 25 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության միակ բաժնետիրոջը, հիմնական ղեկավար անձնակազմը

### 25.1 Վերահսկողություն

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում «USU Հայաստան» ՓԲԸ-ն, որը հանդիսանում է Ընկերության միակ բաժնետերը:

### 25.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտները հետևյալն են.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<b>Գործարքներ</b>		
<i>Մայր ընկերություն</i>		
Ծառայությունների մատուցում	85,958	86,903
Ստացված ծառայություններ	(9,163)	(7,237)
Տոկոսային ծախս	(56,799)	(14,986)
	<u>19,966</u>	<u>64,680</u>

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Մնացորդներ</b>		
<i>Մայր ընկերություն</i>		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15,013	7,506
Ստացված փոխառություններ	(345,505)	(291,715)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(34,910)	(29,284)
	<u>(365,402)</u>	<u>(313,493)</u>

### 25.3 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարությունը և նրանց անմիջական ազգականները «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի բաժնետիրական կապիտալում էական մասնակցություն չունեն:

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Անձնակազմի գծով ծախսեր» հոդվածում.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անձնակազմի գծով ծախսեր	4,124	3,266
	<u>4,124</u>	<u>3,266</u>

## 26 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոններով և նորմատիվներով:

ՀՀ կենտրոնական բանկը վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 100,000 հազար դրամի չափով:

Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը (ընդ որում, բաժնետիրական կապիտալի ոչ նյութական ակտիվներով համալրված մասը ընդհանուր կապիտալի հաշվարկին մասնակցում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի՝ 100,000 հազար դրամի 25 տոկոսի չափով) կուտակված վնասը, այդ թվում ընթացիկ տարվա վնասը:

2019 և 2018թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Աուդիտ չարված	
	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Հիմնական կապիտալ	146,601	232,428
Լրացուցիչ կապիտալ	-	116,214
Ընդամենը՝ ընդհանուր նորմատիվային կապիտալ	146,601	348,642

2019թ. և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պահպանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կապիտալի համարժեքության նորմատիվը (2018թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ և մինչև 2018թ. նոյեմբերի 30-ը Ընկերությունն ունեցել է կապիտալի համարժեքության նորմատիվի խախտումներ):